

է, զամանդի որչափ ալ ուսուցիչներուն մեծ մասին պէս, բարձրագայն տիտղոսներ ունեցող հոգեւորականներ են, բայց թօշակ չեն ընդունիր ամենեւին: Քէլհամի զատ միայն մէկ զպրոց կայ (Միրֆիլտի մէջ) որ գլուցածիւ համեմատ, նման պայմաններու մէջ կը զործէ:

Թէ ի՞նչ է ասոր պատճառը, պէտք է բացատրութիւն մը տալ: Քէլհամի զպրոցը հիմնուած է և կը կառավարուի վանական նկարագիր ունեցող միարանութեան մը կողմէ, որուն անդամները իրենց ժամանակն ու ծառայութիւնը ամրողջովին հելայնորէն ի սպաս կը գննեն միարանութեան զործին, Անգլիոյ եկեղեցին մէջ զանազան կրօնական Միարանութիւններ կան, որոնց մէկն է «Ընկերութիւն Սրբազն Առաքելութեան»ը (Society of the Sacred Mission): Այս ընկերութիւնը, որ մէր մէջ ծանօթ է S. S. M. սկզբնատառերով, կրօնականներու և աշխարհական զործիններու համայնք մըն է, որուն անդամներ ուժատած են նույրուել աստուածային պաշտամունքին երեք պայմաններով:

ա) ՀԱՅԱԶԱՆՑԻՄԻԹԻՒՆ: Անոնք կ'ապրին կարգապահութեան տակ, միարանութեան կարգերուն ու կանոններուն ենթակայ: Անոնք կը հրաժարին իրենց անձնական զործը ընտրելու իրաւունքն:

բ) ԱՂ.ՔԱՍՈՒԹԻՒՆ: Անոնք կը հրաժարին իրենց անհատական «միջոցներէն» կամ ինչքէն, և հասարակաց քասի մը ունին իրենց եղբայրներուն հետ:

գ) ԿՈՒՄԱՅԻՐՈՆՍՈՒԹԻՒՆ: Անոնք ընկերական կապերէ ազատ կ'ապրին, այսինքն չեն ամուսնանար:

S. S. M. ի անդամներն են որ ըստանձնած են Քէլհամի զպրոցը պահելու պատասխանատութիւնը, թէն անոնք ուրիշ շատ ծառայութիւններ ալ կ'ընեն Անգլիոյ եկեղեցւոյն, թէ Անգլիոյ և թէ Հայրաւային Արքիկէի և թէ ուրիշ տեղեր:

Դպրոցին ուսանողները, Քէլհամի զարոնթացքը աւարտելին ետքը, քննուելու համար պէտք է ներկայանան մէկ կամ աւելի եղիսկոպոսներու Սարկաւագ կամ քահանայ ձևուադրուելէ ետքը անոնցմէ շատեր կ'երթան Անգլիոյ մէջ ծխատէր քահանայ կ'ըլլան և կամ սատր երկիրներու մէջ միսինար: Այս պարագային, անգլի-

քան եկեղեցականութեան մեծ մասին պէս, անոնք կը պահեն իրենց անհատական գոյքերն ու ստացուածքները, և ազատ են ամուսնանալու երրոր ուզեն: Բայց կ'ապրին ու կը զործեն իրենց զանուած թիմին և պիտկապոսին տեսչութեան և իրաւասութեան ներքեւ և եկեղեցիի կանոններուն համաձայն:

Սակայն ուսանողներէն անոնք որ կը փափաքին մտնել S. S. M. ի մէջ, այդ պարագային ձևուադրութենէն առաջ կամ յետոյ, անոնք կ'ընդունուին իրեւ ընկերութեան սկսնակ կամ նորընծայ, և յետոյ կ'ընեն վանական կեանքի վիրացիշեալ երեք հանդիսաւոր ուժաւը:

Գրեց՝ ՀԱՅՐ Հ. ՊԵՏԱԿԱՆ
Հայացոյ՝ ԱԵՐՍԽԱ ՄՐԿ. ՏԵՐ-ԱԵՐՍԽԱՅԵԱՆ

ԵՓՐԵՄ ԽՈՐԻ ԿԱՄ ԽՈՒՐԻ

Հայ զրչագիրներու մէջ Ա. Եփրեմի տրուած այս մակղիբը, որուն ամրողջական ձեն է Երեւէլ Աբբէ-Ջ Աբբէ-Երեւէլ Խորի (կամ Խորէլ Աբբէ-Ջ այլ և այլ մեկնութեանց տեղի տուած է:

Հայէլ Բառարան արարական ծագութ կուտայ (և զարմանալի է որ Էրեւէլ կը նըշանակէ քահանայ, և ցայտա Սուրբիոյ մէջ բազմաթիւ Սուրբացի ընտանիքներ կան որոնց ընտանեկան մականունն է Էրեւէլ, որ կը նշանակէ քահանայ, ճիշդ ինչպէս Հայոց մէջ կան Փափագեաններ, Երեցեաններ), իսկ հին բառարանի մը մէջ կ'ըսէ Հ. Բ. Էրեւէլ=վերծանող դրուած է:

Բայց հարկ է նախ որոնել Ասորերէնի մէջ թէ չկա՞յ արգեօք բառ մը որ քիչ շատ նոյն իմաստը տայ: Տօքթօր Մինկանա, Ասօրի ազգաւ և համբաւաւոր ասորագէտ ու արեւելագէտ, տեղեկացուց ինձ թէ ստուգիւ կայ ասորերէն այդպիսի մի բառ կիլլրին, կարոյ, որ եկեղեցական աստիճան մըն է որ կ'արտօնէ Գիրքը կարգալու եկեղեցւոյ մէջ, ճիշդ մէկ աստիճան վար սարկաւագէ:

Զայնուորի տեղաշրջմամբ դիւրաւ կը նայ ԱԵՐՍԽԱ փոխուած ըլլալ հայերէնի մէջ Երեւէլ, և շ զիմորու յօդ ըլլալ:

Զարմանալին այն է որ սասրի զրչագրաց մէջ ծանօթ չէ բնաւ Էրեւէլ կամ Էր-

է մակղիրը, այլ Ephrem Malphana, Եփրեմ ուսուցիչ, Ephrem Mshāmshana Եփրեմ սարկաւագ (զի Երբեք չէ ընդունած և պակապսով թեան կարգ) կամ պարզապէս (Tuvana) Mar Ephrem=հրանեի Տէր Եփրեմ: Իսկ Արեմոնեայց քով Եփրեմ Syrus Եփրեմ Ասորի, որուն կը համապատասխանէ հայ Ներքէն Ասորաց: Սակայն աւելի քան առարկուստական է նորումս ոմանց առաջարկը Ասորացն կարդալ Ասորաց և առոր ածական տալ Խորէն, և Խորին Ասորիքը հաւասար զնելով Մակարայեցոց Գրքին Ասորէն Ասորացին (մինչդեռ այլ է Խորին Ասորիք, և այլ է Մատորին Ասորիք) այդ մակղիրը լոկ Ս. Եփրեմի հայրենիքի յորդը ջորջումը համարիւ:

Անունի մը կից ազգանուն, տոհմանուն կայ գործածուած, ինչպէս Միքայէլ Ասորի, Ասանկ Պարթե, Կայլն նաև ծննդեան քաղաքի անուն, Մատթէոս Ռուշանդացի, Փաւատոս Բուզանդացի (միշտ չէ մասնիկով), քայց Երկրամասի մակղիր չենք յիշեր: Եւ Նկատելու է որ Եփրեմ Խորէն կամ Խորէն անջատ Ասորացէ կայ նաև գործածուած, որ տարօրինակ պիտի ըլլար Երէ Խորին Ասորիք մակղիրին մասր կազմէր. վասնգի այն ատեն Վասակ սպարապէտ կողմանց Մատորին Հայոց (Եղիշէ) պիտի կրնար ըսուիլ վասակ Մատորին, կամ Տէր Զաւէն Բարձր Հայոց (Մանանաղի) Զաւէն բարձր, և այնու Ս. Եփրեմի, և նուտանեաց ծննդավայրին վրայ աւելի լոյս սփուելու համար, կը զնենք հոս Լերդ գարու ասորական ձեռագրէ մը (Եփրեմի թարգմանութեանց, զոր Ասեմանի հրատարակած է) հետեւեալ տեղեկութիւնները:

«Երանեկին Տէր (Մար) Եփրեմ ծննդեամբ Ասորի էր. հայրը կուապաշտ էր և քուրմ, Մծրինցի էր, իսկ մայրը Ամիր քաղաքէն: Կ'ապրէին Մեծայաղթ Կոստանդիանոսի օրով: Հայրը զինքը տունէն վանեց իր չար կամքին անհապանդ ըլլալուն, ուստի Եփրեմ զնաց յարեցաւ Մծրնայ և պիտկոպոս Մար Յակորի, և սրբութեան կեանք մը վարեց մինչև Յովիանու ժամանակ Եփրեմ Մծրին 363'ին յանձնուեցաւ Պարսկաց): Այնուհետև թողուց այդ քաղաքը և եկաւ Եղեսիա, ուր Հոգուոյն Սրբոց շնորհն ընդունեցաւ, և առատօքէն ընձեռեց եկեղեցւոյն՝ Ս. Հոգուոյն պարզե-

ները ու վարդապետութիւնը: Ժամանակ մը յետոյ, զնաց Եղիպտոսի անապատը (Եղիպտոս այս երթը առասպելական է, ու ուժուած յետոյ իրը մեծազոյն արժանիք Եղիպտոսի անապատը առանձնացած հոգենուէր կեանք անցուցած ըլլալ ճանչցուոծ ըլլալով) և անկէ Ս. Բարսեղի մօտ ի Կոստանդիա Պամբաց, և Սարկաւագ ձեռնադրուեցաւ անկէ: Անմիջապէս դարձաւ Եղեսիա և հոն աւարտեց կեանքը Հոգուոց 634 թուկանին, և Փրկչին 373'ին, ինչերրորդ օրը Հազիրանի (Յունիսի):

Մանշեսր ԳԱԱՌԵԿԱ ՖԲՆՏԸՆԳԼԵԱՆ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

Ա.

Ս. ՊԱՏՐԻԿԱՐՔ ՀԱՅԸԸ ԻՐ ԱԹՈՈՒԻՆ ՎՐԱՑ

Սինէնի Յունիսի թիւին մէջ արձանագրելով Ս. Պատրիարք Հօր ապաքինումը, կ'ըսէինք. Ն. Ամեն. Սրբակնութիւնը Հիւանալի կազդուրումով մը կը թուու Սուրբ Քաղաքին Ֆուանսական Հիւանդանոցը:

Ս. Պատրիարք Հայրը անողոքելի ցաւու մը զգեստնուած էր Յովիր. 9, Կիրակի օր. տագնապալից ամիսներէ և կեղծ ապաքինումէ մը ետքը, սովորուած էր Հիւանդանոց մանել Ապրիլ 13, Դե., ուր միահաւատական գործոզութիւնը կատարուեցաւ Ապրիլ 21ին, Յրուանդէմի Աւագ Են. առաւել. իսկ Հիւանդանոցէն իր Աթոռը վերապարձաւ Յունիսի 15, Դե. կրեկոյին, Ս. Յակոբայ Միարանութեան, Ժառանգաւորաց Վարժարանի Աթանազութեան և Երուսաղէմի բոլոր Հայութեան երկիւզած ցնծութիւններուն մէջ, որուն արձագանգ կուտային Ս. Յակոբայ զանգակին խորունկ զանշները, Ս. Քաղաքին վրայ տարածելով զատցուու մո՛ջ ուրախութեան ալիքները:

Ս. Պատրիարք Հայրը իր սիրելի Միարանութեան և իր աշակերտներուն և Հայ ժողովուրդի անկեղծ արտայայտութեան թափորով ուղղակի Ս. Տաճարը մասն՝ օրյէն իշնէէ հոռը, ազօթեց Գլխակիրի մատուան մէջ, ուր ազօթած էր Հիւանդանոց երթալու առեն, յետոյ Աւագ Մեղանի առջեւ անցաւ, հռն ալ ազօթել ետքը, առաջնորդուեցաւ Պատրիարքարան, օրնենց Միարանութիւնը և արձակեց:

Իսկ Յունիսի 28, Դե. կ'էսօրէն յառաջ, իր առաջին այցելութիւնը տուաւ ժառանգաւորաց Վարժարանի և Տեսութեան, տաքի վրայ միասմէր այցելեց Սարկաւագաց՝ իրենց սենեակներուն մէջ, քաջալերեց ամէնքն ալ, և հետեւեալ առ-